

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քարաշենի Լ.Սարգսյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուր (5 դասաժամ), հասարակագիտություն (7,5 դասաժամ), տնտեսագիտություն (2 դասաժամ), ինֆորմատիկա (6 դասաժամ), բնագիտություն (4 դասաժամ), ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ.-ի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա Քարաշենի Լ.Սարգսյանի անվան միջն. դպրոցում՝ 2022 թ. հոկտեմբերի 13-ին ժամը 12:00-ին՝ ինֆորմատիկա, ժամը 13:00-ին՝ բնագիտություն, ժամը 14:00-ին՝ տնտեսագիտություն, հասարակագիտություն, ժամը 15:00-ին՝ Ֆիզկուլտուրա (հասցե՝ գ.Քարաշեն փ.10, 2.13): Տեղեկությունների համար զանգահարել 077-990-135 հեռախոսահամարով: